ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.6-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. փետրվարի 26-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 6 (վեց) հայտ՝

- «Թայմ» ՍՊԸ-ի,
- «Ֆորմիկա Արտ» ՍՊԸ-ի,
- «Օրդեր ֆիլմ փրոդաքշն»-ի,
- «ԱԶԴ» ՍՊԸ-ի,
- Արմեն Գալոյան ԱՁ-ի,
- «Նիկոն» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 6 (վեց) կազմակերպության՝

- «Թայմ» ՍՊԸ-ի,
- «Ֆորմիկա Ար«Նիկոն» ՍՊԸ-ի տ» ՍՊԸ-ի,
- «Օրդեր ֆիլմ փրոդաքշն»-ի,
- «ԱԶԴ» ՍՊԸ-ի,
- Արմեն Գալոյան ԱՁ-ի,
- «Նիկոն» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- **«Թայմ» ՍՊԸ**-ի հայտում ներկայացված ծրագրում նախատեսված չեն մրցույթի հրավերի 2.4.1 կետով սահմանված պահանջների պահպանմամբ գործողություններ: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ապահովված չէ նաև մրցույթի 2.4 կետով սահմանված պահանջներից մի քանիսի առկայությունը, այդ թվում՝

- 1-ին ենթակետով պահանջվող ընկերության կանոնադրությունը (վերջին խմբագրությամբ) կցված չէ,

- 2-րդ ենթակետով պահանջվող պորտֆոլիոյում ռիլեր ու լուսանկարներ առկա չեն,

- 5-րդ ենթակետով պահանջվող լուսանկարների և վիդեո կոնտենտի առաջարկվող տեսլականը (վերջնական արտադրանքի լայն կոնցեպտը) կցված չէ: Նեկայացված չէ համառոտ գաղափարը՝ ինչպես է նախագիծը կազմակերպվելու, պլանավորվելու և իրագործվելու,

- 6-րդ ենթակետով պահանջվող տեղեկանքը ԱԱՀ-ի վերաբերյալ (եթե կազմակերպությունը աշխատում է ԱԱՀ-ով) կցված չէ:

- **«Ֆորմիկա Արտ» ՍՊԸ**-ի հայտում ներկայացված ծրագրում նախատեսված չեն մրցույթի հրավերի 2.4.1 կետով սահմանված պահանջների պահպանմամբ գործողություններ: Ապահովված չէ նաև մրցույթի 2.4 կետով սահմանված պահանջներից մի քանիսի առկայությունը, այդ թվում՝

- 1-ին ենթակետով պահանջվող ընկերության կանոնադրությունը (վերջին խմբագրությամբ) կցված չէ,

- 2-րդ ենթակետով պահանջվող պորտֆոլիոյում ռիլեր առկա չեն,

- 4-րդ ենթակետով պահանջվող լուսանկարների և վիդեո նկարահանումների իրականացման ծախսերի նախահաշիվը ներկայացված չէ,

- 6-րդ ենթակետի պահանջով ներկայացված ԱԱՀ-ի վերաբերյալ (եթե կազմակերպությունը աշխատում է ԱԱՀ-ով) տեղեկանքը ստորագրված և կնքված չէ կամ էլեկտրոնային ստորագրությամբ չի ներկայացված:

• **«Օրդեր ֆիլմ փրոդաքշն»-ի** հայտում ներկայացված ծրագրում նախատեսված չեն մրցույթի հրավերի 2.4.1 կետով սահմանված պահանջների պահպանմամբ գործողություններ: Ապահովված չէ նաև մրցույթի 2.4 կետով սահմանված պահանջներից մի քանիսի առկայությունը, այդ թվում՝

- 2-րդ ենթակետով պահանջվող պորտֆոլիոյում ռիլեր առկա չեն,

- 3-րդ ենթակետով ներկայացված ինքնակենսագրականները ստորագրված, կնքված չեն կամ էլեկտրոնային ստորագրությամբ չեն ներկայացված:

• **«ԱԶԴ» ՍՊԸ**-ի հայտում ներկայացված ծրագրում նախատեսված չեն վերոգրյալ մրցույթի հրավերի 2.4.1 կետով սահմանված պահանջների պահպանմամբ գործողություններ: Ապահովված չէ նաև մրցույթի 2.4 կետով սահմանված պահանջներից մի քանիսի առկայությունը, այդ թվում՝

- 2-րդ ենթակետով պահանջվող պորտֆոլիոյում ռիլեր առկա չեն,

- 3-րդ ենթակետով ներկայացված ինքնակենսագրականները ստորագրված, կնքված չեն կամ էլեկտրոնային ստորագրությամբ չեն ներկայացված,

- ներկայացված տարբեր փաստաթղթերում ներառված է հակասական տեղեկատվություն, մասնավորապես՝ համապատասխան տեղեկանքում Ընկերությունը հավաստում է, որ ԱԱՀ-ով հարկվող չէ, սակայն ծախսերի նախահաշիվը ներառում է ԱԱՀ-ով հաշվարկ:

• **Արմեն Գալոյան ԱՁ**-ն՝ Armeps.am համակարգում փաստաթղթեր չի ներբեռնել: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ համաձայն 2001 թվականի ապրիլի 3-ի «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի՝ «Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին դրամաշնորհների հատկացումն իրականացվում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին:

• **«Նիկոն» ՍՊԸ**-ի հայտում ներկայացված տարբեր փաստաթղթերում ներառված է հակասական տեղեկատվություն, մասնավորապես՝ համապատասխան տեղեկանքում Ընկերությունը հավաստում է, որ ԱԱՀ-ով հարկվող չէ, սակայն ծախսերի նախահաշիվը ներառում է ԱԱՀ-ով հաշվարկ:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 6 (վեց) կազմակերպության՝

- «Թայմ» ՍՊԸ-ի,
- «Ֆորմիկա Արտ» ՍՊԸ-ի,
- «Օրդեր ֆիլմ փրոդաքշն»-ի,
- «ԱԶԴ» ՍՊԸ-ի,
- Արմեն Գալոյան ԱՁ-ի,
- «Նիկոն» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Լուծարել** Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը և հայտարարել նոր մրցույթ:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան (Հանձնաժողովի նախագահ)	-	_____
Ս.Հովհաննիսյան	-	_____
Դ.Կարապետյան	-	_____
Ա.Բաբայան	-	_____
Հ.Սահակյան	-	_____
Լ.Բասմաչյան	-	_____
Շ.Հովսեփյան	-	_____